ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/138

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 31.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2021թ. թիվ 26/26-1/8343-2021 գրությամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 17.05.2021թ. թիվ 01/61-11341 գրության հիման վրա, 25.05.2021թ. թիվ 26/26-1/8343-2021 գրությամբ նախաձեռնել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի վարույթում նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/138 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/34» ծածկագրով բաց մրցույթին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/34» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 28.04.2021թ. և սահմանվել է վերջնաժամկետ՝ 12.05.2021թ. ներառյալ:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստացել է 28.04.2021թ. և ստանալուն պես, նույն օրը, այն է՝ 28.04.2021թ. դիմում-հայտ է ներկայացրել Ընկերության բանկային հաշիվները սպասարկող բանկին՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին՝ համապատասխան որակավորման և պայմանագրի ապահովումները ստանալու համար:

Ի հավաստումն այն փաստի, որ ծանուցումը ստանալուն պես ՍՊԸ-ն նույն օրը «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին ներկայացրել է դիմում-հայտ՝ կից ներկայացվում է ՍՊԸ-ի դիմում-հայտի պատճեն, ինչպես նաև արտատպումը էլ. փոստից, որը հավաստում է դիմում-հայտը «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին ներկայացնելու փաստը:

Բանկային երաշխիքների տրամադրման երկարատև ընթացակարգ անցնելով՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բանկի վարկային կոմիտեն 08.05.2021թ. մերժել է բանկային երաշխիքների տրամադրումը՝ գրավադրվելիք գույքը նպատակարմար չլինելու հիմքով:

Այնուհետև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն որպես բանկային երաշխիքի ապահովում առաջարկել է մեկ այլ գույք, որի հիման վրա «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի վարկային կոմիտեն 13.05.2021թ. հաստատել է բանկային երաշխիքների տրամադրումը:

Սակայն պատվիրատուն հայտնել է, որ չի կարող ընդունել բանկային երաշխիքները մեկ օր ուշացումով և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից՝ սահմանված ժամկետում ապահովումները չներկայացնելու հիմքով:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի

փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստացել է 28.04.2021թ. և ստանալուն պես, նույն օրը, այն է՝ 28.04.2021թ., դիմում-հայտ է ներկայացրել Ընկերության բանկային հաշիվները սպասարկող բանկին՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին, համապատասխան որակավորման և պայմանագրի ապահովումները ստանալու համար:

Բանկային երաշխիքների տրամադրման երկարատև ընթացակարգ անցնելով՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բանկի վարկային կոմիտեն 08.05.2021թ. մերժել է բանկային երաշխիքների տրամադրումը՝ գրավադրվելիք գույքը նպատակարմար չլինելու հիմքով:

Այնուհետև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն որպես բանկային երաշխիքի ապահովում առաջարկել է մեկ այլ գույք, որի հիման վրա «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի վարկային կոմիտեն 13.05.2021թ. հաստատել է բանկային երաշխիքների տրամադրումը:

Սակայն պատվիրատուն հայտնել է, որ չի կարող ընդունել բանկային երաշխիքները մեկ օր ուշացումով և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոհիշյալ փաստը հաստատելու համար ՍՊԸ-ի փաստաբան Հասմիկ Ենգոյանի կողմից փաստաբանական հարցում է կատարվել «ՀԱՅԲԻԶՆԵՑԲԱՆԿ» ՓԲԸ-ին, որպեսզի ՓԲԸ-ն հայտնի, թե «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից դեռևս 28.04.2021թ. հայցած «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/34» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում կնքվելիք պայմանագրի համար բանկային երաշխիքի տեսքով պայմանագրի և որակավորման ապահովումները երբ են եղել պատրաստ, և մասնավորապես, բանկային երաշխները ՍՊԸ-ին տրամադրելու որոշումը երբ է ընդունվել բանկի վարկային կոմիտեի կողմից: Ի հավաստումն վերոհիշյալի՝ կից ներկայացվում է հարցման պատճեն և փոստային անդորրագիրը:

Վերը նշված փաստերը վկայում են, որ պայմանագրի և որակավորման ապահովման նպատակով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքները սահմանված ժամկետում չներկայացնելը ամբողջությամբ կապված է

«ՀԱՅԲԻԶՆԵՑԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ, այսինքն վերջինիս կողմից երաշխիքների տրամադրման գործընթացի ձգձգման հետ, քանի որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն պայմանագիրը ստանալու հենց նույն օևը դիմում-հայտ է ներկայացրել բանկին՝ երաշխիքներ ստանալու համար, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում ՍՊԸ-ին չպետք է վերագրվի ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնման որևէ խախտում:

Վերոհիշյալի արդյունքում Ընկերության պայմանագիր կնքելու իրավունքից զրկելը իր հերթին հանգեցեցրել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը ու փաստական հանգամանքները և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/138 ընթացակարգի շրջանակներում 01.06.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 2-3 աշխատանքային օրով հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում, իսկ 23.06.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.05.2021թ. թիվ 01/61-11341 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 05.02.2021թ. կազմակերպվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/34 ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից:

Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով 28.04.2021թ. Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/34 ծածկագրով պայմանագիրը և վերը նշված ապահովումները: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/138 ընթացակարգի շրջանակներում 01.06.2021թ. ժամը 09:35-ին և 23.06.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/138 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/138 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/34 ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, այնուհետև որոշվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն հայտարարել անգործություն և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2021թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմնավորմամբ, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 12.05.2021թ./ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.05.2021թ. թիվ 26/26-1/8343-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 17.05.2021թ. թիվ 01/61-11341 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի գրությունը՝ կից փաստաթղթով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:... Եթե գնման

հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին:

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/34 ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, այնուհետև որոշվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն հայտարարել անգործություն և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2021թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:***

Այսպես, Պատվիրատուն Ընկերության ուղղված որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու 28.04.2021թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը. «Հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ կից Ձեզ է ներկայացվում ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/34 կնքվելիք պայմանագրի նախագիծը, որը Ձեր հետ կարող է կնքվել հրավերով սահմանված ձևով պայմանագրի գնի տաս տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու դեպքում, ինչպես նաև որակավորման ապահովում պայմանագրի գնի տասնհինգ տոկոսի չափով:

Պայմանագրի որակավորման ապահովումը ներկայացվում է երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացած որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին:

Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացած պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին»:

Այսպիսով՝ Պատվիրատուն 28.04.2021թ. armeps էլեկտրոնային գնումների իրականացման համակարգի միջոցով Ընկերությանը ծանուցել է պայմանագրի նախագիծը և առաջարկել տաս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և ապահովումները, իսկ արդեն ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2021թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է,*** որ Ընկերությունը Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմնավորմամբ, որ «***Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 12.05.2021թ./ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը և ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել:***

Այս տեսանկյունից՝ գործում առկա փաստերի համաձայն՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2021/138 ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրել Ընկերության կողմից «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին ներկայացված 28.04.2021թ. և 06.05.2021թ. դիմում-հայտերը՝ համապատասխան որակավորման և պայմանագրի ապահովումներ ստանալու համար:

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն մերժել է 28.04.2021թ. դիմում-հայտը՝ բանկային երաշխիքների տրամադրման՝ գրավադրվելիք գույքը նպատակարմար չլինելու հիմքով:

Այնուհետև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն 06.05.2021թ. ներկայացված դիմում-հայտով առաջարկել է մեկ այլ գույք, որի հիման վրա «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն հաստատել է բանկային երաշխիքների տրամադրումը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն Ընկերության ուղղված 24.06.2021թ. թիվ 3985-02 գրությամբ հայտնել է հետևյալը. «Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում ենք, որ ***07.05.2021թ.-ին հաստատվել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին*** 9 900 000 ՀՀ դրամ գումարի չափով, 8 ամիս ժամկետով՝ ***որակավորման ապահովման*** և 6 600 000 ՀՀ դրամ գումարի չափով, 19 ամիս

ժամկետով՝ ***պայմանագրի ապահովման բանկային երաշխիքներ տրամադրելու վերաբերյալ հարցը:***

Երաշխիքի նամակները 12.05.2021թ. չեն տրամադրվել, պայմանավորված Բանկի ներքին գործընթացների վավերացման, ինչպես նաև գրավի ձևակերպման համար անհրաժեշտ նոտարական ձևակերպումները և գրավի գրանցումը չիրականացնելու պատճառով»:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***պատասխանատու է մեղքի առկայության դեպքում***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, ինչպես նաև Ընկերության կողմից ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/34 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում պարտականությունների կատարմանն ուղղված գործողությունները և դրսևորած վարքագիծը, այն է՝ Ընկերությունը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված միջոցը՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը ստանալու օրը՝ 28.04.2021թ.-ին, դիմել է բանկին, մինչդեռ, համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի վերը նշված գրության, Ընկերության ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումների /բանկային երաշխիքների/ հայտը հաստատվել է բանկի կողմից 07.05.2021թ.-ին, սակայն երաշխիքի նամակները 12.05.2021թ. չեն տրամադրվել Ընկերությանը՝ պայմանավորված բանկի ներքին գործընթացների վավերացման, ինչպես նաև գրավի ձևակերպման համար անհրաժեշտ նոտարական ձևակերպումները և գրավի գրանցումը չիրականացնելու պատճառով, փաստացի Ընկերության կողմից 12.05.2021 թվականը ներառյալ Պատվիրատուին պայմանագրի և որակավորման ապահովումների չտրամադրումը պայմանավորված է եղել Ընկերության կամքից անկախ հանգամանքներով, ուստի նման պայմաններում

Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2021թ. թիվ 26/26-1/8343-2021 գրությամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**